ԴՐՕՇԱԿ

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ“ ՕՐԳԱՆ

ՕԳՈՍՏՈՍԻ ՏԱՍՆԵՐԵՔ

ՍԱՍՈՒՆԻ

ԱՊՍՏԱՄԲՈՒԹԵԱՆ ԵՒ ԿՈՏՈՐԱԾԻ ՏԱՐԵԴԱՐՁԸ

ՍԱՍՈՒՆՑԻ ՎԻՐԱՒՈՐԵԱԼՆԵՐ

ՍԱՍՈՒՆՑՈՒ ՎԻՃԱԿԸ

Սասուն գաւառի Սէմալ գիւղացի տասն անձէ բաղկացած ընտանիք մը էինք, քիւրտերու հետ պատերազմ ըրինք. մեր ինչքը և կեանքը պաշտպանելու համար. իսկ երբ զօրքն միացաւ քիւրտերու հետ, մենք փախանք. ես հօրս հետ էի, հայրս անօթութենէն չը կրցաւ փախչել, իսկ ես մտայ անտառի մէջ և ուշա-

գնաց եղայ. զօրքերը հայրս բռնեցին և թրով զարկին փորը դուրս թափեցին՝ մէջը վառօթ լեցունելով, այրեցին. վերջէն ուրիշներու հետ գնացի, հօրս մնացած փշրանքները և ոսկորները թաղեցի։

Մնացած ինն անձինքս 40 օր շարունակ անօթի քարերու և խիտ անտառներու մէջ մնացինք, խոտ կերանք, մինչև որ պոռացող ձայները դադրեցան, որ այլ ևս զմեզ չէին հալածեր, իջանք մեր տեղերէն, Մուշ եկանք. հիւքիմաթը զմեզ ղրկեց Մշոյ դաշտի Խիյպեան գիւղը, այնտեղ փլած տան մէջ ձմեռը խիստ դառն նեղութիւններ կրեցինք, կերածներս կըլկըլ էր, առանց կերակուրի. ցրտէն և անօթութենէն հիւանդացանք, երկու աղջիկ և տղայ մը մեզմէ մեռաւ և այժմ մնացած 6 անձինքս, մերկ և անօթի՝ կը թափառինք գիւղէց գիւղ՝ կմախք դարձած։

ՍԱՍՈՒՆ

Յուլիս ամսայ վերջէն սկսեալ մինչ սեպտ. սկիզբը տաճկական զօրքն և աշիրաթ քիւրտեր սկսան անխնայ սրով և հրով կոտորել զՀայեր։

Նախ մինչդեռ Շէնըք և Սէմալ գիւղացիք իրենց ոչխարներ և տաւարներ ամարանոց՝ լեռը հանած կարածցնէին, Մուշ բնակող վալըքանցի քիւրտեր, որ ասոնք ալ ամարանոց եկած էին, յարձակուեցան Շէնըք հայ գիւղի ոչխարաց վրայ և յափշտակեցին, որ հայ հովիւներ դիմադրելով և ետևնին ընկնելով, ոչխարներ յետ առին և երկու կողմէն ալ վիրաւորուածներ եղան։

Երկրորդ օր պաքրանցի քիւրտեր յարձակեցան Շէնըքու և Սէմալ գիւղօրէից վրայ ու սկսան կողոպտել ինչ և անասուններ. ասոնց ալ հայեր դիմադրելով, գրեթէ յետս դարձուցին, և քիւրտեր փախչելով օսմանեան բանակին կը դիմեն, որ հայոց գիւղերուն մօտ էր. ողորմելի հայեր կարծելով, թէ օսմանեան զօրքը արդարութիւն ի գործ դնելով, պիտի օգնէր հայոց. սակայն ի զուր։ Յայնժամ օսմանեան բանակի զօրքը՝ միանալով քրդաց հետ, սկսան յարձակիլ հայոց վրայ և անխնայ կոտորել արքը, կանայքը և մանկունքը։ Նոյն օր սկսան տանց միջի ամբողջ եղածներ կողոպտել և երկու գիւղն ալ կրակով վառել, անասուններ տանել, երկու գիւղի եկեղեցիներու մէջ հայ կանայք լեցունել և պղծել և ապա սպանել և անոնց որովայնի միջի եղած մանուկներ հրացանի սիւնկիով հանել և սպանել, նմանապէս անկարող ծերեր և դըպրոցի աշակերտներ բռնելով, վառուած կրակի մէջ լեցունել. իսկ մէկ մասն ալ փախչելով, ոմանք քարավէժ և ջուրերու մէջ ինկան մեռան. և շատերն ալ զօրքերու հրացաններով սպանուեցան. վերջապէս լեռներ ու ձորեր դիակներով լեցուեցան, ոմանք ալ շնչասպառ հազիւ թէ անկան անտառներու և քարերու այրերու մէջ, ազատուեցան։

Ուստի ասոնցմէ երկու անձինք բռնելով, տարին օսմ. բանակի զօրապետին, որ զօրապետն երդմամբ յուսադրեց վիշեալ երկու անձինքը, թէ գնացէք, ձեր մընացեալ ազատուած հայեր բերէք, թող հպատակին և ազատին։ Սոյն երկու հայ անձինք՝ ելնելով լեռներ և ձորեր շրջելով, գտան Տէր-Յովհաննէս քահանայն և քանի մը հարիւր անձինք, որք սովէն և անօթութենէն ուշաթափ եղած էին, համոզուեցան և Տէր-Յովհաննէսի հետ բանակը երթալով, անձնատուր եղան։ Եւ երբ բազմութեամբ բանակը հասան, սպարապետ հրամայեց կապել կապանօք և ոմանց ձեռք բրիչ տալով՝ խոր հորեր փորել։ Տէր-Յովհաննէսի աչքեր սրածայր դանակով կը հանին և ապա կը գլխատին. նմանապէս բոլոր կապեալներ հրացանի սիւնկիով սպանել, հորի մէջ լեցնել և ձորակի ջուրի հետ նետել և շատերն ալ կտրատել, շուներու առաջ լեցունել և գազանաց ու թռչնոց կերակուր ընել և այլն։

Եւ ապա յարձակուեցան Կէլիկուզանայ և 48 գիւղերու վրայ մինչև ի Դալվորիկ գաւառը, բոլոր գիւղերը կրակով վառեցին, որոց մէջ թէ եկեղեցի քանդեցին, մեծաւ մասամբ, 6 գիւղի դպրոցները այրելէն զկնի աշակերտներ և վարժապետներ ալ սպանեցին և ցիր ու ցան ըրին։ Յիշեալ գիւղերու ժողովրդոց թիւ 36,000 կը հասնի, յորոնցմէ հազիւ թէ 2000 փախստական ազատուեցան և այսօր դաշտիս Մշոյ գիւղօրէից մէջ և լեռներ կը թափառին. և շատերն ալ մերկանդամ և անօթի կը մեռնին, ուստի թէ ապրողներուն և թէ մեռնողներու թիւը յականէ յանուանէ տալ առ այժմ չի գիտցուիր։

Ցուցակ աւրած գիւղերու.

1	Ալիանցիք	25	տուն
2	Ալոչիկ	7	„
3	Դուշոք	12	„
4	Շէնըք գիւղ	40	„, 2 եկեղեցի, 1 դպրոց
5	Մզիէսորփ	15	„
6	Դաւիթ	10	„
7	Կլընկիման	20	„
8	Պապճանց	8	„
9	Սէմալ գիւղ	50	„, 1 եկեղեցի, 1 դպրոց

10	Միւս դաշտօք	8	„
11	Պլոյարտեր	10	„
12	Պօնկէ	20	„
13	Կըռէհըսար	10	„
14	Մերկիր	8	„
15	Խոշոք	12	„
16	Կէլիկուզան գիւղ	80	„, 1 եկեղեցի, 1 դպրոց
17	Կլիսան	8	„
18	Հիւսենցիք	30	„
19	Մխիթար	15	„
20	Խարիպշան	13	„
21	Խտան	20	„
22	Երկու աղբի	60	„, 1 եկեղեցի, 1 դպրոց
23	Թիկ	7	„
24	Կըղէռըշ	4	„
25	2 Հիթինք	70	„, 2 եկեղեցի
26	Նոնոց		
27	Դալվորիկ գիւղ	60	„, 1 եկեղեցի, 1 դպրոց
28	Զորեր	15	„
29	Սպահանք գիւղ	50	„, 1 եկեղեցի
30	Հարթք	45	„
31	Հոսնուտ	15	„
32	Փուրխ գիւղ	50	„, 1 եկեղեցի
33	Խըլհովիտ	40	„
34	Տրվալինք	40	„, 1 եկեղեցի
35	Հըլօղինք	50	„
36	Եղկարտ	30	„
37	Մերկիր	25	„
38	Հրբթխոյ	35	„, 1 եկեղեցի
39	Քօրախոյ	40	„
40	Հումանք	15	„
41	Մրզբայ	35	„
42	Իշխանձոր	40	„, 1 եկեղեցի, 1 դպրոց
43	Խրզբկոռ արտեր	45	„
44-45	Սևիթ և Կռանոս	65	„, 1 եկեղեցի
46	Ընկուզնակ	50	„, 1 եկեղեցի
47	Խաչուկներ	20	„
48	Արտկոնք	40	„

ՄԻ ՏԱՐԻ Է

Ուղիղ մի տարի է, երբ քաջարի սասունցին կրկին պարզեց յեղափոխական դրօշակը, երբ Սասունը, ամբողջ Սասունը, գրեթէ անպատրաստ, կռուի դաշտ դուրս եկաւ՝ իր դիմացն ունենալով հազարներից բաղկացած կանոնաւոր հետեւակ և հեծեալ զօրք, թնդանօթներ և քրդեր տասնեակ հազարներով։

Այո՛, ճիշտ մի տարի է, երբ անվեհեր Սասունը թէ՛ և՝ շրջապատուած չորս կողմից թնդանօթներով, կարկտահար էր լինում ռումբներով և գնդակներով, բայց և այնպէս կարողացաւ յետ մղել մի ահագին բանակ հարուածել, մեծ կորուստներ հասցնել նրան։ Ամբողջ 18 երկար ու ձիգ օրեր՝ Յուլիսի 27-ից մինչև Օգոստոսի 13-ը սասունցիք՝ միացած, առիւծ կտրած, հարուած հարուածի հետևից տալով, թոյլ չտուին թշնամուն մուտք գործել երկրի ներսը։ Թշնամին շփոթուած, ապշած, իրարանցման մէջ է. քիւրդերը փախչում են, զօրքը թընդանօթներով նրանց յետ է մղում դէպի պատերազմ... 18 օր Սասունը յաղթութիւն յաղթութեան հետևից է տանում, կոտորած կոտորածի հետևից հասցնում՝ ասան և ութ օր անընդհատ։

Զօրքերի հրամանատար նենգամիտ փաշան մի ուրիշ միջոցի է դիմում. դադարեցնելով կռիւը, նա բանակցութեան է հրաւիրում սասունցիներին։ Հացի, ռազմամթերքի պակասութիւնը, կատարեալ բացակայութիւնը հարկադրում է մեր քաջերին ընդունել այդ առաջարկութիւնը։ Հարկաւոր է լինում պատգամաւորներ ուղարկել. ընտրում են 184 ներկայացուցիչ։ Մինչ այս մինչ այն յանկարծ թշնամին ներս է խուժում անառիկ երկիրը։ Սասունցիք միայն այժմ են նկատում իրենց գործած սխալը, բայց արդէն ուշ էր։

„Յուսահատ և ահեղ կռիւ կը ծագի, դաշոյններով, սրերով և նաջիներով, կուրծք առ կուրծք։ „Լեռնանման դիակներով կը ծածկի դաշտը։ Կը տես„նէ Գըրգօն ծերունի մը, որ թևերը քաշած, դամաս„կեան ահեղ խենջարն ի ձեռին իրարու հետ դիակ„ներ կսփռէ և անընդհատ կառաջանայ. անոր ետևէն „կերթայ իւր որդին, գայթելով դիակաց մէջ և աղ„ղակելով. „Հայր, հայր, քաջազունք այսպէս կոստնուն „դիակաց վրայէն“։ Անոնցմէ ոչ մի չի ձերբակալուիր, ոչ „ոք կուէն խոյս չի տար, այլ ամենքը կընդունեն նա„հատակի պսակը՝ արեամբ ներկուած, եռապանիկ թըշ„նամիներու հոգիներ իջեցնելով ի Թափս դժոխոց“։

Սկսում է կոտորածը, տմարդի կոտորածը։ Բայց սասունցիք յետ չեն նահանջում, այր և կին աներկիւղ դիմում են կոտորած։ Կանայք կռւում են քարերով և խենջարներով։ Գազան զինուորները մորթում են անմեղ մանուկներին, դիակները ճօճում սիներների վրայ։ Թընդանօթների պայթումը, երեխաների ճիչ, աղաղակը դողդացնում են ամբողջ երկիրը։ Շփոթ, իրարանցում, կատարեալ դժոխք։ Մի տեղ անասելի չարչարանք, տանջանքներ են կատարում զինուորները, մի այլ տեղ

կանայք ժայռերից իրենք իրենց անդունդն են նետում, որ չընկնեն բիրտ զինուորների ձեռքը, որ չանպատուեն իրենց անարատութիւնը։

Ամբողջ 10 օր՝ Օգոստոսի 15-24-ը տևում է այս կոտորածը։ Կոտորում են անխտիր բոլորին, գազանային տանջանքներ, շիկացած երկաթի կաթսաներ, ցցեր... Ո՞ր մէկը յիշենք, երևակայել հարկաւոր է այն սարսափների տեսարանը...

Ճիշտ մի տարի է անցել այդ ժամանակից։

Ի՞նչ եղաւ այս մի տարւայ ընթացքում։

Երբ այդ գազանութիւնների լուրը յայտնի եղաւ Եւրոպայում, մամուլի լաւագոյն մասը միաձայն բողոքեց սուլթանի կառավարութեան դէմ։ Վերջինս սկսեց հերքել իրողութիւնը, յեղաշրջել փաստերը։ Մամուլը զայրացած պահանջեց եւրոպական պետութիւններից միջամտել։ Նրանք հասարակութեան և մամուլի միահամուռ պահանջների ճնշման տակ միջամտեցին և... ուղարկեցին կոտորածի տեղը մի քննիչ յանձնաժողով։ Մամուլը անկաշառ մամուլը դրանով չբաւականացաւ, սեփական թղթակիցներ ուղարկեց երկրի խորքերը։ Այդ անձնուրաց մարդիկ՝ վտանգի ենթարկելով իրենց կեանքը, մըտան Տաճկահայաստան, իրենց ընդարձակ յօդուածներով երևան հանեցին սուլթանի կառավարութեան ձեռքով կատարած և կատարւող քստմնելի գործերը։ Քաղաքակրթուած երկիրների հասարակութիւնը ապշում, զայրանում է։ Միտինգներ են տեղի ունենում Անգլիայում և Ամերիկայում։ Պետութիւնները կազմում են ռէֆորմների մի ինչ որ ծրագիր, որը տաճիկ կառավարութիւնը մինչև օրս չի կամենում նոյն իսկ լրկ խօսքով ընդունել...

Դիպլոմատիայից օգնութիւն սպասող հայերի յոյսերը ի դերև անցան։

Իսկ մինչ այդ ապստամբուած ժողովրդին մի այլ չարիք է վերահասնում։ դա սովն է։ Ոմանք գաղթում են զանազան երկիրներ, մնացածներից սովն է զոհեր տանում։ Եւ այսօր շատ շատերը՝ կմախք դարձած, տեգերում են Ցարօնում և Կարին, օգնութիւն հայցում իրենց թշուառ եղբայրներից։

Ճիշտ մի տարի է անցել մեր յեղափոխական պատմութեան այդ նշանաւոր մոմենտից յետոյ։ Բայց յուսահատական չէ նա՝ այս ժամանակամիջոցը։ Ճիշտ է, մեծ զոհեր տուինք, ահագին, անփոխարինելի կորուստներ ունեցանք, բայց Սասունի ապստամբութիւնը մեզ համար մի նոր դարագլուխ է բանում։ Նա ահագին զարկ տուեց յեղափոխական գործին, սթափեցրեց ամբողջ ժողովուրդը, էլեքտրականացրեց նրա բոլոր դասերը։ Նորից, բայց աւելի ուժեղ, կենդանի, չտեսնուած շարժում առաջ բերաւ։ Օր օրի վրայ աւելանում են յեղափոխական կոմիտէները, սփռւում բուն երկրի զանազան անկիւնները։ կազմւում են նոր և նոր հայդուկային խմբեր, զէնքեր տեղափոխում, ընդհարումներ, հրոսակային ճակատամարտներ զօրքի և քրդերի հետ, ժողովրդային ցոյցեր, նշանաւոր մատնիչների, ոստիկանների սպանութիւններ յեղափոխական տերրորիստների ձեռքով...

Այո՛, Սասունի ապստամբութիւնը և կոտորածը զարթեցրին ամբողջ ժողովուրդը դարևոր թմրութիւնից։ Կռիւը սկսուած է և նրա յաջող ելքը մեր իւրաքանչիւրից է կախուած։ Հեռի՛ մեզանից դիպլոմատիան. մենք նրանից սպասելիք չունինք. մեր յոյսը մեր բազուկների վրայ դնենք և կուենք։

Կուե՛նք յանուն դարերով հարստահարուած ժողովրդի.

Կուե՛նք յանուն Սասունի անմահ հերոսների.

Կուե՛նք՝ ցցերի վրայ հանած անմեղ մանկանցը վրէժխնդիր լինելու.

Կուե՛նք բռնաբարուած, ապա բարբարոսաբար նահատակուած մեր մայրերի, մեր քոյրերի ոտնակոխ արած պատւի համար.

Կուե՛նք ստրկական շղթաներով կաշկանդուած, սուլթանի լծի տակ հեծող ժողովրդի ազատութեան համար.

Կուե՛նք, կուե՛նք մինչև մեր վերջին շունչը։

Կամ մա՛հ, կամ ազատութիւն։

ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՄԱՀ

Այս է բոլոր յեղափոխականների դէվիզը, այս է և մերը, ազատութիւն կամ մահ, այս է միակ պատւաւոր կեանքը և այս ենք մենք պահանջում։

Մենք պահանջում ենք տիրող բռնակալութեան ոչնչացումն և մեր մարդկային իրաւունքների յաղթանակը. և դրա համար մենք կուում ենք, դրա համար հայ ժողովուրդը սկսել է արիւն թափել, իւր հայրենիքը ներկել իւր որդկերանց արիւնով։

Հայ ժողովուրդը դարե՛ր է, որ շլինքը ծռած փշրող, ապականող, մեռցնող բռնակալի լծի տակ, տանում է դժոխային կեանք. դա՛ր է, որ նա զրկւել է իւր մարդկային իրաւունքներից և ծառայում է իբրև մի բեռնակիր անասուն, դա՛ր է, որ նրան կեղեքում, անպատւում, սպանում են, դա՛ր է, որ նրան

ոտի տակ տուած կոխկրտում են և ենթարկում լիրբ ու լպիրշ կոպտութիւնների, ծաղրի ու ամեն տեսակ տանջանքների։ Այլ ևս ոչինչ չէ մնացել նրա համար մաքուր, սուրբ և անարատ,—նրա բոլոր զգացմունքները բռնաբարուած, ոտի տակ են տուած, նա ստորացրուած է բարոյապէս. իւր ամբողջ էութեամբ, իւր արտաքին ու ներքին աշխարհով նա չի պատկանում իրեն, այլ անամօթ, անպատկառ բռնակալին։

Այո՛, հայ ժողովուրդը իւր էութեամբ բռնաւորի սեփականութիւնն է, և նա դեռ ապրում է, տանում է այդ կեանքը։ Ապրել բռնաբարուելու համար, ապրել տանջուելու ու անպատուելու համար, ապրել ստրկական շղթաների մէջ խեղտուելու համար. ամօթ է։

Ո՛չ, հայ ժողովուրդ, ո՛չ, բաւակա՛ն է. ժա՛մ է սթափուելու, ժա՛մ է շպրտելու ստրկական լուծը և փշրելու բռնակալի շղթան։

Ազատութիւն կամ մահ, այս են պահանջում քո մարտիրոսները, քո ազատութեան համար նահատակուած հերոսները. այս է պահանջում և հերոս Սասունի հերոս որդիքը, նրա հազարաւոր նահատակների արիւնը՝ որոնք զոհուեցին դրա համար, այս է պահանջում աւերակ դարձած և արիւնով ներկուած Սասունը։

Ահա լրանում է միամեակը այն սարսափելի տրմարդ կոտորածի, որ տեղի ունեցաւ անցեալ տարի Սասունում։ Այս ամիսներումն էր, որ Սասունը խեղտուած էր հրացանների ու թնդանօթների մխի մէջ, այս օրերումն էր, որ Սասունի կանաչ ու ծաղկաւէտ բնութիւնը ներկուել էր իւր քաջ զաւակների արիւնով, այս ժամանակամիջոցումն էր, որ թշնամին սրի ու հուրի էր բռնել ամբողջ Սասունը—այրում, կոտորում էր... և հպարտ ու հսկայ Սասունը ընկաւ... ու որբացաւ իւր սիրասուն զաւակներից։

Ու ամբողջ մի տարի է անցել այդ օրանից և մենք չենք սրբել այդ արատը, մենք դեռ վրէժխնդիր չենք եղել։ Մենք արտայայտել ենք մեր զայրոյթը, մենք ցոյց ենք տուել թշնամուն մի քանի գործողութիւններով, որ մենք շարունակում ենք կռիւը, որ մենք զինաթափ չենք եղել և չենք լինիլ. բայց այդ չէ։

Այդ արատը կը սրբուի այն ժամանակ, երբ ջարդուած, փշրուած կը լինին թշնամու ստրկական շղթանները, երբ նա դուրս քշուած կը լինի մեր հայրենիքից և երբ Սասունի արիւնոտ լեռների վրայ կը ծածանի ազատութեան դրօշակը։

Մինչդեռ չկայ այդ, մինչդեռ Սասունը մնում է աւերակ, որդիքը ցիր ու ցան և Հայաստանի հողի վրայ թագաւորում է սուլթանական բռնակալ կառավարութիւնը, այդ արատը կը մնայ և մենք միայն արժանի կը լինինք ազգերի արհամարանքին ու զզուանքին...

Իսկ այդ արատը կարելի է սրբել այս նշանաւոր տարեդարձին դարձեալ կրկնենք, միմեայն յեղափոխութիւնով։

Հայ ժողովուրդ, յեղափոխութի՛ւնն է միակ ճանապարհը քո ազատութեան, յեղափոխութի՛ւնն է, որ քեզ կը տայ քո բաղձածը՝ ազատ երկիր, ազատ մարդ։

Համոզի՛ր դրանում, համոզի՛ր, որ մինչև աւերումների չենթարկես թշնամու հիմնարկութիւնները, մինչև տերրորի չենթարկես նրա ամեն տեսակ պաշտօնեաները ու ամեն տեսակ կեղեքիչները, մինչև արիւն չհոսցնես, չկայ փրկութիւն...

Ցոյսդ մի՛ դնիր շահասէր դիպլօմատների և ո՛չ էլ թթու պոռոտախօս ու պօլիտիկան ազգասէրների վրայ. յոյսդ դի՛ր քեզ վրայ, քո բազուկների վրայ։

Ձեռք տո՛ւր յեղափոխականին, թիկնակի՛ց եղիր, ծմո՛ւր սեղմի՛ր նրան և կռի՛ր. կռի՛ր յանուն քո նահատակների, կռի՛ր յանուն ազատութեան.

Բա՛ւ համարիր դարերով կրածդ ստրկի կեանքը, բա՛ւ համարիր կոտորածը, անպատուութիւնը, կեղեքումը, թալանը, բռնաբարութիւնը, լկումը...

Տասնեակ տարիներ է, որ քո որդիկը բարձրացրել են յեղափոխական դրօշակը, մտի՛ր այդ դրօշակի տակ, ամո՛ւր բռնիր նրանից. դա է քեզ փրկողը. կուրծք տո՛ւր թշնամու գնդակի առաջ, թո՛ղ արիւնդ հոսէ, այդ է քեզ փրկելու։

Թշնամու գնդակով վիրաւորուած և արիւնոտ կուրծքդ է, որ կը պաշտպանէ քո պատիւը, դրանից հոսած արիւնը կը խեղտի թշնամուն և քեզ կը բերի կեանք. եթէ վէրքը մահացու է, դու կը մեռնիս, բայց պատուաւոր, հերոսական մահով. պատի՛ւ քեզ։

Ազատութի՛ւն կամ մա՛հ, կրկնենք այս արիւնոտ տարեդարձին և ոգևորուած տասնեակ հազար մարտիրոսների հերոսական մահով, աւելի հաստատուն և վճռական քայլերով գնանք դէպի կռիւը, դիմենք դէպի մեր կէտնպատակը։

Կամ ապրինք իբրև ազատ մարդ, կամ մեռնինք հերոսական մահով։

„Ազատութի՛ւն կամ մա՛հ“.—ահա՛ միակ ելքը, ահա՛ միակ պատուաւոր կեանքը։

ՀԱՅԱՍՏԱՆ ԵՒ ՇՎԷՅՑԱՐԻԱ

(ՄԻ ՇՎԷՅՑԱՐՈՒՀՈՒՑ)

—

Հայե՛ր,

Ձե՛զ եմ դիմում այս տողերով, որ նուիրած են մի տխուր և վշտալի տարեդարձի, տարեդարձ, որ լի է խրախուսանքով և վեհ, ազնիւ օրինակներով։

Մի տարի է, ճիշտ հենց այս օրերում, մի սարսափելի կուռվ արիւնոտուեց ձեր սիրուն երկիրը։ Ձեր բարբարոս իշխողը՝ չբաւականանալով կեղեքել, կողոպտել, բռնութեամբ խլել ձեր ունեցած-չունեցածը, ձեր արդար աշխատանքի պտուղը, ձեզ ձգեց անամօթ, մարդի (lâche) մարդասպանների ճիրանները։

Դուք կուեցիք քաջութեամբ, բայց ընկճուեցիք թշնամու քանակութեան առջև։ Թո՛ղ այս անկումը ձեզ փշրելու և վհատեցնելու փոխանակ, ձեզ ներշնչի նոր ոյժ, նոր եռանդ. յիշելով այն արիւնոտ օրերի թշուառ զոհերին, երդուեցէ՛ք վրէժխնդիր լինել, երդուեցէ՛ք, ինչպէս նրանք, կուել ցմահ ազատութեան սուրբ գործի համար։

Յիշեցէ՛ք, որ մեզնից դարեր առաջ, ինչպէս և հենց վերջերս՝ մեր օրերում, ուրիշ ժողովրդներ նոյնպէս տանջուել, հեծել են։ Ուժեղները միշտ հարստահարել են թոյլերին. բայց և նոյնպէս միշտ՝ թոյլերը կուել են ձեռք բերելու իրենց ազատութիւնը։

Շա՜տ վաղուց է, մի երկրում, որ այժմ կոչւում է Շվէյցարիա, որը այսօր քաղաքակրթուած, ծաղկած է և որը մի ժամանակ վայրենի էր, ապրում էր աղքատ և սակաւաթիւ ժողովուրդ, բայց լի արիութեամբ և եռանդով։ Ինչպէս դուք, նա էլ է եղել ճնշուած ուժեղ իշխողի լծի տակ, որ և նրան հարստահարում էր. այս փոքրիկ ժողովուրդը, որ բաղկացած էր խեղճ լեռնականներից և պարզակեաց հովիւներից, հեծում էր այդ կապանքների տակ։

Մի քանի մարդ հաւաքւում են և հանդիսաւոր կերպով երդւում՝ տալ իրենց կեանքը իրենց անկախութեան համար։ Այդ երդման լուրը կայծակի արագութեամբ տարածուեց սարից սար։ Եւ հենց որ բոլորը առին այս լուրը, թողին իրենց ընտանիքը, տները, իրենց ունեցած-չունեցածը, խմբուեցին՝ միացած կուելու։

Այս մի բուռը մարդիկ՝ միացած ամուր կապերով, ուժեղացած համերաշխութեամբ ու ընդհանուր հեծանքով, աչքերը յառած իրենց սուրբ դէվիզին՝ — „Մէկը ամենի համար, ամենը մէկի“, կուի դաշտը դուրս եկան՝ մէկը տասի դէմ, և բազմաթիւ ընդհարումներից յետոյ, նրանք յաղթեցին ուժեղ և կարող թշնամուն։

Եռանդի ուժի, մանաւանդ տոկունութեան շնորհիւն է, որ նրանք կարողացան իրենց իրաւունքի յաղթանակը տանել. և նոյն տոկունութեան, համերաշխութեան շնորհիւն է, որ շվէյցարացիքս կարողացել ենք պահպանել մեր ազատութիւնը, որը աւելի թանգ արժէ, քան մեր կեանքը և որը ձեռք է բերուած սուր ի ձեռին։

Հայե՛ր, թո՛ղ այս ևս օրինակ լինի, հետևեցէ՛ք նրանց եռանդին, եղէ՛ք միացած ինչպէս նրանք, մի՛ նահանջէք ո՛չ մի դժուարութեան, խոչընդոտի առաջ և դուք կը յաղթէ՛ք։

Այդ յաղթութիւնը գուցէ ձեզ թա՛նգ նստի, ինչ հոգ, համարձակ դիմեցէ՛ք ձեր կէտ-նպատակին։

Ձեր վիճակը ամին տեղ համակրութիւն է գրաւում, դուք ունէք բազմաթիւ բարեկամներ, ձեզ հետ են նոյնպէս և նրանք, որոնք ատում են անամօթ հարստահարողին և սրանց թիւը մե՛ծ է։ Ամեն կողմից աչքեր են յառած Հայաստանի վրայ, ձեր բոլոր բարեկամները յոյս են դնում ձեզ վրայ, նրանց յոյսը ի դերև չհանէք։

Յիշեցէ՛ք ձեր քաջարի նախնիքը, որ ապրել են այդ հողի վրայ ազատ ու հպարտ և որի վրայ դուք այսօր ապրում էք կոր ի գլուխ. ասացէ՛ք քաջութեամ, ինքներդ ձեզ՝ որ նրանց որդիքը այլ ևս չեն կարող երկար ժամանակ մնալ ստրուկ և որ աւելի լաւ է մեռնել։

Ձեր առջևը դուք տեսնում էք դալկացած և արիւնոտ դէմքերը Սասունի սուրբ մարտիրոսների, որ կոչում են՝ „եռանդ և վրէժ“. լսեցէ՛ք նրանց և եղէ՛ք հաւատացած, որ անկումը յաղթութեան կը փոխի։

Courage, Arméniens!

ԵՐԿՈՒ ՏԵՍԱՐԱՆ

—

Ծագել է արփին. ահա սէգ Տաւրոս՝
Իբրև փրկութեան նորագոյն փարոս,
Վաղորդեան լոյսի ճաճանչների տակ
Պճնազարդւում է ուրախ, համարձակ։
Եւ ինչ թարմ իղձեր, ի՞նչ յոյս կենսաբեր
Գիտեն աւետել շողշողուն լանջեր...
Այնտեղ չէ փայլում ոչ մաճ, ոչ գութան,
Չէ հնչում դիւթիչ սրինգ հովւական.
Ազատ տաւրոսցին, լերան քաջ որդին
Թողել է հանդը հոգսը ապրուստին.
Այրում են իւր տուն, այրում է իւր դէզ,

Բացուած է գործի մի այլ ասպարէզ։
Անմերձենալի ժայռերն անտառոտ
Եւ կամ լեռնային ծերպերը թփոտ
Ձեն աշաբեկում վայրի եղջերուն,
Չէ ոտնակոխում Նախիրն երերուն.
Մարդկային խմբեր են վխտում այնտեղ,
Առած սուր-սուսեր և հրացան աշեղ։
Սպառազինուած նրանք շարիշար
Ծածկում են Անդոք՝ անառիկ մեծ սար.
Ներկայ է այնտեղ և մանուկ, և ծեր,
Պակաս չէ նաև սէմալցէ տէր-տէր.
Նրա չրթունքի վրայ լուռ ու մունջ
Շարժվում է ահա աղօթքի մրմունջ։
Ապա լեռնցի կտրիճ հայուհին,
Օ՜ նա դաւաճան չէ՛ իւր օջախին,
Աներաժան ընկեր է իւր ամուսնուն,
Նա չի մոռանայ աննման Սասուն։
Անդոքայ սարից Գրրգօն անձնուէր
Հայեացքն ուղղում է դէպ Ֆրռ-Ֆրռ քարեր,
(Այնտեղ, ուր Մուրադ գտաւ ապաստան,
Վճռելով ցմահ մնալ անսասան),
Ապա հոլանի բազուկը մեկնած՝
Խրախոյս է կարդում նա ոգևորուած.
„Մեծահոգութեամբ կուենք միշտ արթուն,
Լինենք, ո՛վ քաջեր, անվախ աննկուն.
Կամ կը վաստակենք ազնիւ յաղթանակ,
Կամ կը պսակենք իբրև նահատակ“...
Քարակոյտերով պարփակուած Շէնիկ
Եւ անընկճելի գիւղը Դալւորիկ
Ցղում են իրար ջերմ սիրոյ բարև,
Մաղթելով միմեանց նոր օր, նոր արև...
Սթափւեց բնութիւն, սթափէ Տարօն,
Կազմ ու պատրաստ է համազգային տօն.
Վեհանձն աւիւնով վառուած սրտեր հաշտ
Դիմում են դէպի կռւի, արեան դաշտ։
Լսւում է ահա փողերի հնչիւն,
Պատռում է օդը սրերի շաչիւն.
Սասունն անվեհեր, Սասուն միայնակ
Տանում է մարտի յաղթական դրօշակ...

***

Խաւարեց արփին... և այժմ հէգ Տարօս,
Աւա՜ղ, չէ՛ այլ ևս փրկութեան փարոս.
Մարող շողերի աղօտութեան մէջ
Նա սուգ է կապում, անպատում, անշէջ։
Ի՜նչ ճնշող մռքեր, ի՜նչ վիշտ մահաբեր
Գիտեն պատճառել սգազգեաց լեռներ.
Նրանց մռայլոտ լանջերին փքուն
Գերեզմանային պաշարել է քուն,
Ուր չէ՛ փողփողում ռռկայծող լոյսը,
Ուր փշրւո՜ւմ է կենսատու յոյսը...
Այնտեղ կուսական խիտ մացառներում
Անմահ տաւրոսցին էլ պահ չէ դնում,
Իւր շրջահայեաց աչքերով անթարթ
Թշնամիներին հիւսելու թակարդ։
Լեռնային հսկայ ծերպերը սուր-սուր
Որբ են մնացել, դարձել են թափուր...
Բաղդով համակից երկու մեծ գիւղեր—
Շէնիկ, Դալւորիկ տոկուն ամոլներ—
Եղել են սրի և հրի ճարակ,
Ընկել, կործանւել են հիմնայատակ։
Չէ լսւում այնտեղ կենդանի մի շունչ,
Լուռ է ամեն ինչ, անձայն, անմռունչ.
Ջոհւած դիակներն արիւնաթաթախ
Կուտւել են չորս կողմ, անտէր և անթաղ...
Միայն աւերակ գոյգին դէմ առ դէմ,
Երբ կանգ է առնում լուսին թալկադէմ,
Չէ զլանում այդ մեռեալ կոյտերին
Իւր ցուրտ շողերից հանելու բաժին...
Անդոք լեռների ցից ժայռերը մերկ
Ծածկում է մի թաց սաւան կարմրաներկ,
Թշւառ զոհերի արեանն է այդ ծոր,
Որ ողողում է, թրջում սար ու ձոր.
Եւ այդ արիւնով մոլի թուրքն ու քուրդ
Իրենց պիղծ կրքին տալիս են յագուրդ...
Իւր ընկերներով Գրրգօն անարգել
Շարունակում է թէև մարտնչել,
Բայց փրկութեան յոյսն արդէն չքացաւ,
Նա էլ կիսամեռ գետին փռւեցաւ...
Մռայլեց բնութիւն, մռայլել է Մուշ,
Պատել է նրան թանձրամած մշուշ։
Սասունը սոված, Սասունն անպաշտպան
Բաց թողեց ձեռքից դրօշակ յաղթական։
Նա այժմ յուսահատ դէս ու դէն դարձած՝
Աղաղակում է. „Տւեցէ՛ք ինձ ՀԱՑ...“

ՕԳՆԵՑԻ՛Ք...

ԱԿՆԱՐԿ ՄԸ

Պալքանեան ազգերու յեղափոխութեանց յաջող հետեւանքէն, հողային կորուստներէն վերջ, «վեհափառ սուլթանը», այդչափ դառն փորձերէ վերջ, չէր կրնար տանիլ Հայկական շարժումն. ալ բաւ էր իւր տուժածները։ Կատաղօրէն հետամուտ եղաւ իւր բոլոր կարողութիւնը ի գործ դնել՝ այդ շարժումը արմատախիլ ընելու համար։ Նախ ջանաց պալքանեան ազգերու դէմ իւր ըրած նոյն ճնշումները բանեցնել, խեղդելու համար Հայկական ընդվզումը. ձայն հանողներուն ըրաւ ամեն տեսակ բռնութիւն՝ բանդարկեց, աքսորեց, անլուր տանջանքներու ենթարկեց եւ ի վերջոյ կախաղան բարձրացուց զանոնք, երբեք չուզելով հասկընալ, թէ այդ դժգոհութեան ոգւոյն յառաջ գալու պատճառը երկրի տնտեսական անտանելի ու անապահով վիճակն էր միայն։ Ո՛չ, նա չի կրցաւ ու չուզեր հաւատալ թէ իւր կառավարչական կարգերը կրնան պատճառ ըլլալ ժողովրդական ընդվզումի. ի՛նչպէս, ինք գիշեր ու ցորեկ աշխատի, տքնի իւր հպատակներուն կարելի եղածին չափ երջանիկ, բարեկեցիկ ընելու եւ դեռ այդ ապերախտները յանդգնի՞ն զինք քննադատելու ու տիրող կարգերու յեղաշրջումը պահանջելու... Ժո-

ղովրի երջանկութեան, բարեկեցութեան համար գիշեր ու ցորեկ աշխատի, ինքնի ա՛յնպիսի մէկը, որ իւր մարմնական ու հոգեկան ամողջ կեանքը նուիրած է իւր հարեմանցի չքնաղ հուրիներուն... Եւ այդպիսին հասկնայ ժողովրդի վիճակը—ի՜նչ դառն հեգնութիւն։

Բայց եւ այնպէս նա քաջ հասկցաւ, թէ հայ ժողովրդի բողոքող ձայնը իւր դէմ ուղղուած է ու իրեն պիտի վնասէ, հետեւաբար եւ իւր հանգստութիւնը վրդովող այդ անախորժ, փոթորկալից ձայնը ուզեց մարել, խափանել իսպառ։

Ահա սուլթանի կառավարութիւնը նախ դժոխային բարբարոսութեանց սոսկալի չարքով մը հալածեց յեղափոխականները, ի՜նչ հետեւանք տեսաւ—ո՛րչափ որ իւր ոյժը աւելցուց՝ հիմն ի վեր կործանելու Հայկական շարժման շէնքը, ա՛յնչափ աւելի մեծացաւ, ընդարձակեցաւ տարկա։ Կռահեց ուրեմն, որ աւոր վախճանին ալ պիտի կրնայ ըլլալ պալքաննեան ազգերու ազատամրութեանց հետեւանքին պէս,—ասոնք ալ զինք պիտի անդամահատեն. երբէ՛ք, բնաւ երբէք։ Բռնակալը նախարարներուն հետ կը խորհրդակցի երկար ատեն եւ վերջապէս կը յղանայ բնաջինջ ընել ամբողջ հայ ազգը՝ թէ տնտեսական ճնշումով եւ թէ սուրով. «ալ ո՛վ պիտի մնայ ընդվզող», կը մտածէ արիւնարբու—հրէշ Համիդը։ Այժմ կը մնայ միջոցի վրայ խորհիլ, ան ալ հեշտութեամբ գտան. եւ ի՜նչ արմատական միջոց՝—արիւնախում քիւրդերը զինել ու ձգել հայերուն մէջ, տալով իրենց լիազօրութիւն ամեն միջոցների դիմելու, կը բաւէր, որ հոն հայ չթողուն։ Սքանչելի՜ եւ հանճարե՜ղ յղացում։ Անմիջապէս այդ հրաշալի գաղափարին գործադրութեան կը դիմեն։ Քիւրդերը կը զինուեն սիստէմով, կը դրուի անոնց մեծերուն փաշայութեան, զօրապետութեան աստիճաններ, ընծաներ կը թափին անոնց բոլորտիքը, եւ ի մեծ ուրախութիւն Աւազակապետին, անոնց գումարտակները կը մկրտուին իւր անուամբ։ Քիւրդերը կը սկսին գործի. թալաններու, առեւանգումներու, սպանութիւններու եւ ի վերջոյ մեծ ու փոքր կոտորածներու ձայներ կը լսուին ամեն կողմէ։ Կը մնայ քիւրդ չի գտնուող տեղերու համար ալ պատշաճ անօրէնութիւն մը ընել։ Այդ աւելի դիւրին. կեդրոնէն հրաման կը տեղայ ամեն գաւառական անկիւններ՝ որպէս զի թէ մասնակի կերպով իսլամ ամբոխը գրգռեն եւ թէ մզկիթներէն պաշտօնապէս քարոզ կը խօսուի հաւատացեալ մուսուլմաններու, որպէս զի վերջիններս ալ սկսին «բնաջինջ ընելու» նպատակին ի նպաստ աշխատիլ։ Մոլեռանդ հաւատացեալները կը բորբոքին կեաւուր հայերու դէմ. անոնց ըրած չահատակութեանց ձայներն ալ կը բարձրանան այն կողմերէն։

Այս ամենը աղէկ. բայց անդին կառավարութեան աչքին փուշ մը կայ. Սասունի անառիկ լեռները կանգնած են իւր դէմ, որոնք բնաւ չեն ուզեր զինք լսել, տուրք տալ։ Նա կը հաւատայ, որ սարերուն մէջ է Հայկական յեղափոխութեան օրրանը, հետեւաբար նախ պէտք է այդ լեռնակոյտը տապլել։ Հրաման հրամանի վրայ կը տեղայ թէ Դ. զօրաբանակին հրամանատար Զէքի փաշային, թէ Բաղէշի կուսակալ Թահսին փաշային եւ թէ քիւրդ պէյերու. որպէս զի ձեռնարկեն այդ մեծ գործին։ Եւ կը ձեռնարկեն ու կը յաջողին։ Սասուն արեան մէջ կը լողայ, գազան բարբարոսութիւնը չի խնայեր ո՛չ մատղաշ տղեկներու, ո՛չ կոյսերու, ո՛չ մայրերու եւ ո՛չ ծերերու ու պառաւներու։ Բարբարոսական դարերը իրաւամբ կը նախանձին ներկայ դարավերջիկին դէմ։

Յաջող լուրը կայծակի արագութեամբ կեդրոն կը հասնի, Համիդի դէմքին վրայ դիւային գոհ ժպիտ մը կը փայլէ—Սասուն ոչնչացա՜ւ, Օրրանը կործանեցա՜ւ...

Բայց, իրօք, կը կարծե՞ս, ո՛վ վատափառ սուլթան, թէ յաջողեցար Սասունը կործանել. կը հաւատա՞ս թէ այլ եւս Սասուն չկայ, չարաչար կը խաբուիս. մարդկային ձեռքով կառուցած շէնքեր միայն հիմնայատակ եղան, մարդու յառաջ բերած սերնդէն մաս մը միայն անհետացաւ։ Բայց այդ կործանուած տուները մարդկային նոյն ձեռքով մի՞թէ դարձեալ չպիտի վերաշինուին, մարդկային նոր սերունդները մի՞թէ չպիտի լեցնեն պակսած մասը. այո՛, ասոնք բոլորը պիտի կատարուին հակառակ քո կատաղութեանդ, լեշակեր-ճիւաղ սուլթան։ Ու մոլեգնէ՛ մանաւանդ, որ մեր սրտերը այժմ ցաւերու բոլորովին վարժուած ըլլալով, պիտի տոկան քու ամեն հրէշային բարբարոսութեանցդ, մինչ ամրապինդ պիտի մնան՝ չզոհելով ո՛չ մէկ մասնիկ ազատութեան վսեմ գաղափարի։ Ու քու այժմու գոհունակ ժպիտը սարսափի պիտի փոխուի, երբ հայկական բուն ապստամբութիւնը, այնչափ նախաքայլերէ վերջ, պայթի ամենուստ. եւ հաւատա՛, ո՛վ Ներոններու հրաշակերտ, թէ այդ որոտալից ժամը հեռու չէ...

Հայ եղբայրնե՛ր, ճանչնանք ներկայ ճգնաժամային րոպէին ահագին նշանակութիւնը, գիտնա՛նք ուրեմն այս պատմական րոպէն համապատասխան, նպատակայարմար ժամանցով սահեցնել։ Ամենամեծ ոճիր մ՚է այս եզական վայրկեանին ծալապատիկ նստիլը. ամօթ չէ՞ մեզ կասիլ ա՛յն պահուն, երբ արդէն տեսած ենք իւր բոլոր վսեմութեամբը մեր նպատակէտը։ Թող ուրեմն ամեն հայ իւր օգնութեան բաժինը հատուցանէ իւր ազգին կամ կեանքով, կամ խօսքով եւ կամ դրամով, որոնք, երեքն ալ այժմու կարիքին ամենաանհրաժեշտ տարրերն են։ Եւ իւր այդ պարտքը կատարելէն վերջ միայն թող ամեն ոք իւր խիղճը հանդարտած գտնէ. ապա թէ ոչ, թող գիտնայ՝ թէ ապագայ սերունդին, որու փրկութիւնը մեր գործունէութիւնէն կախեալ է, ահեղ ու անաչառ դատաստանին առջեւ անէծքի ու նախատինքի բաժին միայն պիտի ստանայ։

Օգնե՛նք իրար, եղբայրնե՛ր, հասնենք ամեն տեղ։ Մեր նպատակակէտին կարենալ հասնելու համար դեռ բաւական փուշեր կան կոխելիք, անվեհեր կերպով յառաջանենք մեր ուղին. մեր արած իւրաքանչիւր քայլը թող աստիճան մը եւս աւելի ամրապնդէ մեր հոգին։ Պարտաճանաչութեան վսեմ ոգով տոգորուած, առանց կասելու դիմենք դէպի մեր կէտ-նպատակին։

Յառա՜ջ ուրեմն, եղբայրներ, մի՛շտ յառաջ...

ՀԱՆՐԱԾԱՆՕԹ ՄԱՏՆԻՉ ՄԱՄԲՐԷԻ

ՋԱՐԿՈՒՄԸ

Սօֆիայից մեզ հեռագրում են.—

Օգոստոսի 3-ին (ն. տ.) գիշերը ժամը 2-ին Կ. Պոլսում դաշնակցական 2 ահաբեկիչներ զարկեցին Թատրոնից դուրս եկած ժամանակ նախկին յեղափոխական, նախկին վարդապետ, դաւաճան և հանրածանօթ մատնիչ ՄԱՄԲՐԷԻՆ։ Վիրաւորուած է և մէկ ոստիկան։ Ահաբեկիչները ազատ են։ Մանրամասնութիւնը նամակով։

—o—

Այս հեռագիրը, որ ստացանք ամսիս 6-ին (ն. տ.), անմիջապէս տպագրելով առանձին թերթիկների վրայ, ցրւեցինք։

Դաշնակցութեան անծանօթներից խնդրւում է թղթակցութեան եւ նւիրատւութեան համար դիմել.
L. Boole, 15, Augustus Rd. Hammersmith, W. London.
Վիեննա, Դաշնակցութեան տպարան